Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԶԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցչի գրասենյակ

Զրպարտության մասին ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումների մասին օրենքների նախագծերի վերլուծություն

Սույն վերլուծությունը պատրաստվել է ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի պատվերով՝ ARTICLE 19 կազմակերպության իրավախորհրդատու Բոյկո Բոյեվի կողմից

Ապրիլ 2010

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանումներ

- ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված հոդված 1087.1-ի կետ 2-ի երկրորդ պարբերության մեջ «արտահայտություն» բառը պետք է փոխարինվի «հրապարակային արտահայտություն» բառակապակցությամբ, խուսափելու այն տպավորությունից, որ հանրային շահերին վերաբերող արտահայտության ոչ բոլոր ձևերն են պաշտպանվում օրենքի կողմից:

- ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված հոդված 1087.1-ի կետ 3-ը պետք է խմբագրվի ավելորդ բառերը վերացնելու համար:

- Փոփոխությունների և լրացումների նախագիծը պետք է ընդգրկի հանրային շահի հստակ սահմանումը, ըստ որի այն ներառում է իշխանության բոլոր թևերը, քաղաքականությունը, հանրային առողջությունն ու անվտանգությունը, իրավապահ և դատական ոլորտները, սպառողների և սոցիալական շահերը, շրջակա միջավայրի պահպանությունը, տնտեսական շահերը, լիազորությունների կատարումը, արվեստն ու մշակույթը:

Վիրավորանք

- Վիրավորանքի սահմանումը պետք է ներդաշնակեցվի գնահատող դատողություններին վերաբերող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշների հետ, կամ, որպես նվազագույն միջոց, պետք է ամբողջությամբ վերացվի վիրավորանքի համար նախատեսվող պատասխանատվությունը:

Իրավական պաշտպանության համակարգը

- ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված հոդված 1087.1 կետ 5-ի ա ենթակետում արտահայտությունների համար նախատեսված պաշտպանությունը պետք է ընդլայնվի:

- Առաջարկվող փոփոխություններից պետք է վերացվի արտահայտությունները հավասարակշռված ձևով ներկայացնելու պահանջը:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է բացահայտ կերպով ճանաչեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիք պաշտպանելու իրավունքը և այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

Հատուցման կարգը

- Առաջարկվող փոփոխությունները պետք է հստակ սահմանեն

հատուցման նպատակը նշելով, որ այն նախատեսված է հատուցելու զրպարտված անձի համբավին հասցրած անմիջական վնասը:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է հստակ սահմանեն, որ վնասի հատուցման բոլոր ձևերը բավարարում են Եվրոպական կոնվենցիայի հոդված 10-ով սահմանված երեք կետից բաղկացած թեստի պահանջներին:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է հետևեն հետևյալ կանոնին հատուցման կարգն ամրապնդելու և արտահայտվելու ազատության իրավունքի երաշխիքներն ապահովելու նպատակով.
    - Դատարանները պարտավոր են հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել և օգտագործվել են արտադատական հատուցման ձևերը, այդ թվում կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները:
    - Զրպարտչական արտահայտություններով համբավին հասցրած վնասը հատուցելու դիմաց միջոցներ նշանակելիս դատարանները պետք է առաջնահերթություն տան իրենց հասու ոչ-նյութական հատուցման ձևերին:
    - Նյութական հատուցում նշանակելիս դատարանները պետք է ըստ պատշաճի հաշվի առնեն արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը:

- Դատարանները պետք է պարտադիր կերպով առաջարկեն կողմերին հաշտության գալ և աջակցեն կողմերին հաշտություն կնքելու գործում: Հաշտեցման առաջարկը վնասը գնահատելիս պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք:

- Նյութական հատուցման վերին շեմը պետք է զգալիորեն իջեցվի:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է բացահայտ կերպով նշեն, որ վնասի հատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է պարունակեն հստակ դրույթ, ըստ որի նյութական հատուցումը պետք է համաչափ լինի հասցրած վնասին և որ հատուցման առավելագույն չափը կարող է նշանակվել միայն առավել լուրջ դեպքերում:

- Բոլոր զրպարտչական արտահայտությունների նկատմամբ պետք է կիրառվի հատուցման նույն վերին շեմը: Մամուլի ներգրավվածությունը չպետք է դիտվի որպես հիմք՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար:

Վարութային երաշխիքներ

- Հոդված 1087.1, կետ 4-ի շարադրումը պետք է փոփոխվի նշելու, որ հայցվորը պարտավոր է ապացուցել զրպարտություն համարվող

փաստացի տվյալների իրականությանը չհամապատասխանելը, եթե վերջինները վերաբերում է հասարակությանը հուզող հարցերին:

- Փոփոխությունների և լրացումների նախագիծը պետք է ընդգրկի դրույթ, ըստ որի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության մասին դրույթների մեկնաբանությունը պետք է իրականացվի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երաշխիքներին համապատասխան, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի:

- Փոփոխությունների և լրացումների նախագիծը պետք է նշի, որ զրպարտության մասին գործ հարուցելու ժամկետը մեկնարկում է տվյալ արտահայտությունը տվյալ վայրում և տվյալ ձևով հրապարակելու առաջին օրվանից:

- Փոփոխությունների և լրացումների նախագիծը զրպարտության համար պատասխանատվության ենթարկվող անձանց շրջանակից պետք է վերացնի այն անձանց, որոնք չեն հանդիսանում զրպարտող արտահայտությունների հեղինակներ, խմբագիրներ կամ հրատարակիչներ և տեղյակ չէն և չէն կարող իմանալ, որ նպաստում են զրպարտող արտահայտությունների տարածմանը:

- Դատարանները պետք է կարողանան վաղ շրջանում կարճել/մերժել չհիմնավորված բողոքների վարույթը, սրանով իսկ թույլ չտալով չարակամ հայցվորներին հեռանկարներ չունեցող զրպարտության բողոքներ դատարան ներկայացնելու միջոցով ճնշումներ գործադրել քննադատող լրատվամիջոցների նկատմամբ :

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հուշագրում զետեղված է զրպարտության մասին Հայաստանի իրավական դաշտի փոփոխությանն ուղղված երեք օրինագծերի վերաբերյալ ARTICLE 19-ի կողմից կատարված վերլուծությունը: Այս օրինագծերը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում, ՀՀ Քրեական օրենսգրքում և ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերն են («օրինագծերը»):[1] Օրինագծերն առաջին ընթերցմամբ ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010 թ.-ի մարտին:

ARTICLE 19-ը միջազգային հասարակական իրավապաշտպան կազմակերպություն է, որը գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ աշխարհի տարբեր երկրներում գործունեություն է ծավալում խոսքի ազատության պաշտպանության և ապահովման ուղղությամբ: Մամուլի ազատության վերաբերյալ իրավական վերլուծություններ ենք տրամադրել ավելի քան 30 երկրների կառավարություններին և քաղհասարակության կազմակերպություններին:[2] Հայաստանում վերլուծություններ են կատարվել տեղեկատվության և խոսքի ազատության մի շարք օրենքների և օրինագծերի վերաբերյալ, այդ թվում՝ Հեռուստատեսության և ռադիոյի մասին 2000թ.-ի օրինագծի, Տեղեկատվության ազատության մասին 2002թ.-ի օրինագծի, ՁԼՄ-ների մասին օրենքի (2003), Ձանգվածային լրատվության մասին 2005թ.-ին առաջարկված փոփոխությունների և այլ փաստաթղթերի վերաբերյալ:

ARTICLE 19-ն ընդհանուր առմամբ ողջունում է առաջարկվող օրինագծերը, մասնավորապես ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով զրպարտությունը ապաքրեականացնելու մասին որոշումը: Զրպարտությունը ապաքրեականացնելով Հայաստանը կմիանա այն առաջադեմ պետությունների շարքին, որոնք ապահովում են արտահայտվելու ազատության և բարի համբավ վայելելու իրավունքների հավասարակշռությունը՝ առանց քրեական պատժամիջոցներ կիրառելու:[3] Ավելին, Քաղաքացիական օրենսգրքի առաջարկվող փոփոխությունները ներառում են մի շարք առաջադեմ դրույթներ, մասնավորապես զրպարտության մեղադրանքը ներկայացնելու դեմ պաշտպանության միջոցներ ներդնելով, վիրավորանքի և զրպարտության համար դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանափակելով, նյութական հատուցման առավելագույն չափերը սահմանելով, իրավական գործողություններ ձեռնարկելու համար սահմանափակ ժամկետ սահմանելով, և ոչ-նյութական

---

[1] ՀՀ ՔՕ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով ՀՀ ՔՕ առաջարկվող նոր բաժինը կոչվում է *«2.1 Պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները»,* ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք և ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք: Առաջարկվող փոփոխությունների ոչ պաշտոնական թարգմանությունը կցված է սույն հուշագրին որպես Հավելված 1: ARTICLE 19-ը պատասխանատվություն չի կրում թարգմանության ճշտության կամ անճիշտ թարգմանության վրա հիմնված մեկնաբանությունների համար:

[2] Այս վերլուծությունների համար տե՛ս ARTICLE 19 կայքը http://www.article19.org/publications/law/legal-analyses.html.

[3] Զրպարտությունը ապաքրեականացրած այլ երկրներից են Բոսնիան և Հերցեգովինան, Կիպրոսը, Էստոնիան, Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան և ՄԹ-ը:

հատուցման միջոցներ, այն է՝ հրապարակային ներողություն, հերքում և դատարանի վճռի հրապարակում, սահմանելով:

Միևնույն ժամանակ ARTICLE 19-ը լուրջ մտահոգություններ ունի հասցրած վնասի դիմաց նյութական հատուցման մեծ չափերի, ոչ համաչափ հատուցման դեմ իրավաչափ և գործուն երաշխիքների բացակայության, վիրավորանքի համար պատասխանատվության կարգավորման և զրպարտության մեղադրանքների դեմ պաշտպանության համալիր համակարգի բացակայության հետ կապված: Ավելին, առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները չեն ապահովում արտահայտվելու ազատության իրավունքի բավարար վարութային երաշխիքներ և արդյունքում կարող են լրջորեն սահմանափակել արտահայտվելու ազատությունը:

Վերլուծության մանրամասները զետեղված են սույն Հուշագրի Բաժին III-ում: Բաժին II-ն ամփոփում է վերլուծության հիմքում ընկած արտահայտվելու ազատությանն ու զրպարտությանը վերաբերող միջազգային իրավունքը, շեշտը դնելով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի և Մարդու իրավունքների միջազգային դատարանի դատական պրակտիկայի վրա: Վերլուծությունը նաև օգտվել է «Զրպարտության սահմանումը. խոսքի ազատության և համբավի պաշտպանության սկզբունքները» վերնագրով ARTICLE 19-ի աշխատությունից («Զրպարտության սահմանումը»):[4] Այս սկզբունքները, ելնելով համեմատական սահմանադրական իրավունքի, ինչպես նաև Եվրոպայի և ՄԱԿ-ի մարդու իրավունքներին վերաբերող դատական պրակտիկայից, լայն միջազգային հավանության են արժանացել, այդ թվում նաև խոսքի ազատության ոլորտում լիազորություն ունեցող երեք հիմնական կառույցների, այն է՝ Խոսքի ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի, ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի և Խոսքի ազատության հարցերով OAS հատուկ զեկուցողի կողմից:[5]

II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

II.1. Արտահայտվելու ազատության երաշխիքները

Արտահայտվելու ազատությունը մարդու հիմնական իրավունքներից է, հատկապես ժողովրդավարություն երաշխավորելու գործում իր հիմնարար դերակատարման բերումով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի՝ ՄԻՀՀ[6] 19րդ հոդվածը և ՄԱԿ-ի գերագույն ասամբլեայի բանաձևը հետևյալ կերպ են երաշխավորում արտահայտվելու ազատության իրավունքը.

> Յուրաքանչյուր ոք համոզմունքների ազատության – դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք ունի. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու,

---

[4] Լոնդոն. ARTICLE 19, 2000.

[5] Տե՛ս 2000 թ.-ի նոյեմբերի 30-ի իրենց համատեղ հայտարարությունը http://www.unhchr.ch/huricane/huricane.nsf/view01/EFE58839B169CC09C12569AB002D02C0?open document

[6] ՄԱԿ-ի գերագույն ասամբլեայի բանաձև 217A(III), ընդունված 10 դեկտեմբերի, 1948:

> ստանալու – լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը՝ ՔՔԻՄԴ,[7] որ ՀՀ կողմից վավերացվեց 1993 թ.-ին, զարգացնում է ՄԻՀՀ-ում ամրագրված իրավունքների մեծ մասը՝ սահմանելով դրույթները կատարելու հետ կապված իրավական պարտավորություններ: ՔՔԻՄԴ 19րդ հոդվածի արտահայտվելու ազատության իրավունքի ամրագրման ձևակերպումները խիստ նման են ՄԻՀՀ-ի 19-րդ հոդվածով ամրագրված ձևակերպումներին: Արտահայտվելու ազատությունը նաև իր պաշտպանությունն է գտել մարդու իրավունքների երեք տարածաշրջանային համակարգերում. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 10-ում (Եվրոպական կոնվենցիա)[8], որը ՀՀ վավերացրեց 2002-ին, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 13րդ հոդվածում[9] և Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի 9րդ հոդվածում:[10]

Եվրոպական կոնվենցիայի հոդված 10(1), մասնավորապես, նշում է.

> Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

Արտահայտվելու ազատությունը մարդու հիմնական իրավունքներից է, հատկապես ժողովրդավարություն երաշխավորելու գործում իր հիմնարար դերակատարման բերումով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը («Եվրոպական դատարանը») բազմիցս նշել է, որ.

> Արտահայտվելու ազատությունը հանդիսանում է [ժողովրդավարական] հասարակության էական հիմքերից և դրա առաջընթացի և յուրաքանչյուր անձի զարգացման հիմնական նախապայմաններից մեկը:[11]

Եվրոպական դատարանը նաև հստակ նշել է, որ արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է վիրավորական խոսքը նույնպես: Դատական պրակտիկայի հիմնարար սկզբունքներից է դարձել այն, որ արտահայտվելու ազատության իրավունքը «կիրառելի է ոչ միայն այն տեղեկատվության կամ գաղափարների նկատմամբ, որ դրական ընդունելության են արժանանում կամ համարվում են ոչ վիրավորական կամ չեզոք, այն նաև այնպիսիների նկատմամբ, որ վիրավորում են, ցնցում են կամ անհանգստացնում են պետությունը կամ դրա բնակչության որևէ խմբին: Սրանք են բազմակարծության, հանդուրժողականության և ազատ մտքի

---

[7] ՄԱԿ-ի գերագույն ասամբլեայի բանաձև 2200A(XXI), ընդունվել է 16 դեկտեմբերի,1966, մտել է ուժի մեջ 23 մարտի 1976:
[8] Ընդունվել է 4 նոյեմբերի 1950, մտել է ուժի մեջ 3 սեպտեմբերի 1953:
[9] Ընդունվել է 22 նոյեմբերի 1969, մտել է ուժի մեջ 18 հուլիսի 1978:
[10] Ընդունվել է 26 հունիսի 1981, մտել է ուժի մեջ 21 դեկտեմբերի 1986:
[11] *Handyside v. United Kingdom*, 7 դեկտեմբերի 1976, դիմում No. 5493/72, կետ 49:

հրամայականները, առանց որոնց չկա «ժողովրդավարական հասարակություն»:[12]

Շեշտվել է նաև, որ «լրագրողների ազատությունը ... ենթադրում է նաև որոշակի չափազանցում և անգամ սադրանք»:[13] Սա նշանակում է, օրինակ, որ որոշակի ուղերձ տեղ հասցնելու համար մամուլը կարող է օգտագործել չափազանցություն, երգիծանք կամ պատկերավոր տեսարաններ:[14] Արտահայտման միջոցների ընտրության իրավունքը մամուլինն է: Օրինակ, Եվրոպական դատարանը պաշտպանել է այն թերթերին, որ որոշել են իրենց քննադատությունը ձևակերպել ծաղրանկարների տեսքով:[15] Կարևոր է նաև կոնտեքստը, որում արվում է այս կամ այն արտահայտությունը: Օրինակ, *Oberschlick-ի* երկրորդ գործում Եվրոպական դատարանը որոշեց, որ քաղաքական գործչին ապուշ անվանելը նույն քաղաքական գործչի կողմից նախկինում արված սադրիչ հայտարարությանը տրված օրինական պատասխան էր, իսկ *Lingens-ի* գործում Եվրոպական դատարանն ընդգծեց, որ «չպետք է անտեսվեն»[16] այն հանգամանքները, որոնցում արվել են այդ վիճահարույց արտահայտությունները:

Եվրոպական դատարանը հատուկ կարևորություն է տալիս քաղաքական բանավեճին և հասարակության համար կարևոր այլ հարցերի շուրջ բանավեճին: Նման բանավեճի ընթացքում արված ցանկացած արտահայտություն կարող է սահմանափակվել միայն խիստ անհրաժեշտ դեպքերում. «քաղաքական խոսքի կամ հասարակության համար կարևոր հարցերի մասին բանավեճերի նկատմամբ սահմանափակումների ... շրջանակը սահմանափակ է»:[17] Եվրոպական դատարանը մերժել է քաղաքական և հասարակության համար կարևոր այլ հարցերի մասին բանավեճի միջև տարբերակումը, պնդելով, որ նման տարբերակման համար «չկան հիմքեր»:[18] Եվրոպական դատարանը նաև հստակեցրել է, որ այս լրացուցիչ պաշտպանությունը կիրառելի է այն դեպքերում, երբ խոսքը գնում է «հանրաճանաչ անձ, հասարակական գործիչ, քաղաքական գործիչ» չհանդիսացող որևէ մեկի մասին. բավարար է, երբ արտահայտությունն արվում է հասարակությանը հուզող որևէ հարցի շուրջ:[19] Նման խնդիրների շուրջ տեղեկատվության հոսքն այնքան կարևոր է, որ ծովարջեր որսացողների դեմ հայտարարություններով հանդես եկող հոդվածներին վերաբերող մի գործում լրագրողների վարքագիծը համարվեց հիմնավորված և, հետևաբար, պաշտպանված որևէ պատասխանատվությունից՝ չնայած այն հանգամանքին, որ որսորդների կարծիքն այս հայտարարությունների վերաբերյալ չէր հայցվել:[20]

---

[12] *Նույն տեղում:* Նմանօրինակ արտահայտությունները բազմաթիվ են տարբեր պետությունների դատարանների և այլ դատական մարմինների պրակտիկայում:
[13] *Dichand and others v. Austria*, 26 փետրվար 2002, դիմում No. 29271/95, կետ 39:
[14] Տե՛ս *Karatas v. Turkey*, 8 հուլիսի 1999, դիմում No. 23168/94, կետ 50-54:
[15] Տե՛ս, օրինակ, *Bladet TromsØ and Stensaas v. Norway*, 20 մայիսի 1999, դիմում No. 21980/93, կետ 63 և *Bergens Tidende and Others v. Norway*, 2 մայիսի 2000, դիմում No. 26131/95, կետ 57:
[16] *Oberschlick v. Austria (No. 2)*, 1 հուլիսի 1997, դիմում No. 20834/92, կետ 34 և *Lingens v. Austria*, 8 հուլիսի 1986, դիմում No. 9815/82, կետ 43:
[17] Տե՛ս, օրինակ, *Dichand and others v. Austria*, նշում 13, կետ 38:
[18] *Thorgeir Thorgeirson v. Iceland*, 25 հունիսի 1992, դիմում No. 13778/88, կետ 64:
[19] Տե՛ս, օրինակ, *Bladet TromsØ and Stensaas v. Norway*, նշում 15:
[20] *Նույն տեղում:*

Արտահայտվելու ազատության երաշխիքը հատկապես կիրառելի է լրատվամիջոցների նկատմամբ: Եվրոպական դատարանը հետևողական կերպով շեշտել է «օրենքի գերակայությամբ առաջնորդվող պետություններում լրատվամիջոցների գերկարևոր դերը» և նշել, որ

> Մամուլի ազատությունը հասարակությանն ընձեռում է իր քաղաքական առաջնորդների գաղափարներն ու վերաբերմունքը բացահայտելու և դրանց մասին կարծիք կազմելու լավագույն հնարավորություններից մեկը: Մասնավորապես, այն քաղաքական գործիչներին հնարավորություն է տալիս անդրադառնալ հանրությանը հուզող խնդիրներին և մեկնաբանել դրանք, սրանով իսկ յուրաքանչյուրին թույլ տալով մասնակցել ազատ քաղաքական բանավեճին, ինչը հանդիսանում է ժողովրդավարական հասարակություն ասածի առանցքը:[21]

Լրատվամիջոցներին վերաբերող գրեթե բոլոր գործերում Եվրոպական դատարանն ընդգծել է «[մամուլի] էական դերը ժողովրդավարական հասարակությունում: Չանցնելով որոշակի սահմանները, հատկապես երբ դրանք վերաբերում են այլ անձանց համբավին ու իրավունքներին, մամուլը միևնույն ժամանակ պարտավոր է, իր պարտականություններին և պարտավորություններին համապատասխան, հաղորդել տեղեկատվություն և գաղափարներ հասարակությանը հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ: Ճիշտ այնպես, ինչպես մամուլը նման տեղեկատվություն և գաղափարներ հաղորդելու խնդիրն ունի, հասարակությունն ունի դրանք ստանալու իրավունքը: Հակառակ դեպքում մամուլը չէր կարողանա կատարել հասարակության կողմից հսկողություն իրականացնողի իր կենսական դերը»[22]: Զրպարտության հետ կապված գործերի համատեքստում Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար և նպաստել հասարակության համար կարևոր հարցերի շուրջ քննարկումներին:[23]

II.2. Արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումները

Միջազգային իրավունքը թույլ է տալիս որոշակիորեն սահմանափակել արտահայտվելու ազատության իրավունքը տարբեր շահեր, այդ թվում՝ համբավը, պաշտպանելու նպատակով: Նման սահմանափակումների պարամետրերը տրված են Եվրոպական կոնվենցիայի 10(2) հոդվածում, որը նշում է.

> Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության,

---

[21] *Castells v. Spain*, 24 ապրիլի 1992, դիմում No. 11798/85, կետ 43:
[22] Տե՛ս, օրինակ, *Dichand and others v. Austria*, նշում 13, կետ 40:
[23] *The Sunday Times v. The United Kingdom*, 26 ապրիլի 1979, դիմում No. 6538/74, կետ 65:

> տարածքային ամ□ողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ □արոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության □ացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է բավարարի երեք կետից բաղկացած խիստ քննության պահանջներին: Այս քննությունը, որը հաստատվել է և՛ Մարդու իրավունքների կոմիտեի[24] և՛ Եվրոպական դատարանի[25] կողմից, պահանջում է, որ ցանկացած սահմանափակում լինի (1) սահմանված օրենքով, (2) ծառայի օրինական շահ պաշտպանելու նպատակին (ներառյալ, ինչպես նշվեց, այլ անձանց համբավը պաշտպանելը, ըստ այստեղ բերված դիտողությունների), և (3) անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար: Մասնավորապես, սահմանափակումն անհրաժեշտ համարելու համար այն պետք է հնարավորինս քիչ սահմանափակի արտահայտվելու ազատությունը, պետք է ձևակերպվի խնամքով և չպետք է լինի կամայական, անարդար կամ ոչ բանական նկատառումների վրա հիմնված:[26] Աղոտ կամ ընդհանուր կերպով սահմանված սահմանափակումները, եթե անգամ դրանք բավարարում են «օրենքով սահմանված» լինելու պահանջին, անընդունելի են, քանի որ վերանում են օրինական շահը պաշտպանելու հստակ անհրաժեշտությունից:

Եվրոպական դատարանը գտել է, որ սա այն բարձր չափանիշն է, որին պետք է բավարարի ցանկացած միջամտություն.

> Խոսքի ազատությունը, ըստ հոդված 10-ի, ենթակա է մի շարք բացառությունների, որոնք, սակայն պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով և որոնց կիրառման անհրաժեշտությունը պետք է լինի հիմնավորված և համոզիչ:[27]

III. ՕՐԻՆԱԳԾԵՐԻ/ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս բաժինը հանգամանորեն վերլուծում է օրինագծերը արտահայտվելու ազատության միջազգային իրավական չափանիշների ներքո: ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը պարունակում զրպարտության քրեականացումը վերացնող դրույթներ, և վերլուծությունը հիմնականում վերաբերում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի առաջարկվող փոփոխություններին և լրացումներին: Մենք կողմ ենք զրպարտությունն ապաքրեականացնելու որոշմանը և առաջարկում ենք ՀՀ

---

[24] Օրինակ, *Laptsevich v. Belarus*, 20 մարտի 2000, հաղորդագրություն No. 780/1997:
[25] Օրինակ, *Goodwin v. United Kingdom*, 27 մարտի 1996, դիմում No. 17488/90:
[26] Տե՛ս *The Sunday Times v. United Kingdom*, 26 April 1979, դիմում No. 6538/74, կետ49 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան):
[27] Տե՛ս, օրինակ, *Thorgeirson v. Iceland*, նշում 18, կետ. 63 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան):

Ազգային ժողովին ընդունել ՀՀ Քրեական օրենսգրքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները:

Ինչպես նշվեց ներածության մեջ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները պարունակում են մի շարք առաջադեմ դրույթներ, որոնք պետք է ընդունվեն Ազգային ժողովի կողմից: Ներմուծվում են զրպարտության մեղադրանքներից պաշտպանվելու միջոցներ, սահմանափակվում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են դատարան ներկայացնել վիրավորանքի և զրպարտության մասին դիմումներ, սահմանվում է դրամական հատուցման վերին շեմը, սահմանվում է դատական վարույթ իրականացնելու ժամանակային սահմանափակում, սահմանվում են ոչ-նյութական հատուցման միջոցներ՝ հրապարակային ներողություն, հերքում և դատարանի վճռի հրապարակում, վերացվում է ազգականների կողմից զրպարտության և վիրավորանքի համար մահացած անձանց անունից դատարան դիմելու հնարավորությունը, վերացվում է պետական մարմինների (կառավարության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դատական մարմինների և իրավաբանական անձանց) կողմից զրպարտության կամ վիրավորանքի համար դատարան դիմելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ մի շարք դրույթներ կարող են անտեղի կերպով սահմանափակել ազատորեն արտահայտվելու իրավունքը:

Հետևյալ պարբերությունները մանրամասն կերպով անդրադառնում են սույն ընդհանուր բնույթի դիտողություններին:

III.1. Սահմանումները

<u>Ակնարկ</u>

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 1087.1-ի նոր շարադրումը սահմանում է զրպարտությունն ու վիրավորանքը: Հոդված 1087.1-ի կետ 2 համաձայն վիրավորանքը «*հրապարակային արտահայտություն*» է՝ [շեշտը հեղինակինն է] (կարծիք կամ գնահատող դատողություն) խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված: Հոդված 1087.1-ի կետ 3-ի համաձայն զրպարտությունը «անձի վերաբերյալ նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող և իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների հրապարակային արտահայտությունն է»:

Հոդված 1087.1-ի կետ 2-ը նշում է նաև, որ արտահայտությունը չի համարվում անձին արատավորելու մտադրությամբ կատարված, եթե այն տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային շահով: Հոդված 1087.1-ի կետ 5բ-ն նշում է, որ փաստացի տվյալները չեն կարող համարվել զրպարտություն, «եթե այն արտահայտելը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային շահով, և եթե անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված և բարեխիղճ է ներկայացրել այդ տվյալները»:

Վերլուծություն

Հոդված 1087.1-ում «արտահայտություն» եզրի օգտագործումը «հրապարակային արտահայտություն» բառակապակցության հետ համատեղ այնպիսի տպավորություն է ստեղծում, որ առաջարկվող նախագիծը չի պաշտպանում գերակշռող հանրային շահով պայմանավորված հրապարակային արտահայտությունների բոլոր ձևերը: Շփոթությունից խուսափելու համար առաջարկում ենք վիրավորանք կամ զրպարտություն չհանդիսացող արտահայտությունները սահմանելիս փոխարենն օգտագործել «հրապարակային արտահայտություն» եզրը: Նման շարադրումը կհամապատասխանի միջազգային իրավունքին, որը պաշտպանում է հանրային շահին վերաբերող բոլոր արտահայտումները:

Ինչ վերաբերում է զրպարտության սահմանմանը, ըստ որի այն «իրականությանը չհամապատասխանող … *կեղծ* փաստերի հրապարակային արտահայտություն» է [շեշտը հեղինակինն է], նշենք, որ այս սահմանման վերջին մասն ավելորդ է, քանի որ ակնհայտ է, որ կեղծ փաստերը չեն համապատասխանում իրականությանը:

Նշենք նաև, որ փոփոխությունների և լրացումների նախագիծը չի տալիս «հանրային շահի» սահմանումը: Սա լուրջ թերացում է: Հստակություն ապահովելու նպատակով առաջարկում ենք, որ փոփոխությունների և լրացումների նախագծում ընդգրկվի հայրային շահը սահմանող դրույթ: Սահմանումը պետք է նշի, որ հանրային շահերից են իշխանության բոլոր թևերին, քաղաքականությանը, հանրային առողջությանն ու անվտանգությանը, իրավապահ գործունեությանն ու արդարադատության իրականացմանը, բնապահպանությանը, տնտեսական շահերին, լիազորությունների իրականացմանը, արվեստին և մշակույթին վերաբերող բոլոր հարցերը:

Առաջարկություններ

- ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված հոդված 1087.1-ի կետ 2-ի երկրորդ պարբերության մեջ «արտահայտություն» բառը պետք է փոխարինվի «հրապարակային արտահայտություն» բառակապակցությամբ, խուսափելու այն տպավորությունից, որ հանրային շահերին վերաբերող արտահայտության ոչ բոլոր ձևերն են պաշտպանվում օրենքի կողմից:

- ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված հոդված 1087.1-ի կետ 3-ը պետք է խմբագրվի ավելորդ բառերը վերացնելու համար:

- Փոփոխությունների և լրացումների նախագիծը պետք է ընդգրկի հանրային շահի հստակ սահմանումը, ըստ որի այն ներառում է իշխանության բոլոր թևերը, քաղաքականությունը, հանրային առողջությունն ու անվտանգությունը, իրավապահ և դատական ոլորտները, սպառողների և սոցիալական շահերը, շրջակա միջավայրի պահպանությունը, տնտեսական շահերը, լիազորությունների կատարումը, արվեստն ու մշակույթը:

Formatted: Bullets and Numbering

III.2. Պաշտպանություն վիրավորանքից

<u>Ակնարկ</u>
Ըստ նախորդ բաժնի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների և լրացումների նախագծով հոդված 1087.1-ի կետ 2-ը տարբերակում է վիրավորանքն ու զրպարտությունը: Վիրավորանքը սահմանվում է որպես «խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտություն (կարծիքը կամ գնահատող դատողությունը»: Դրույթը նաև բացառություն է նախատեսում «գերակշռող հանրային շահի» հետ կապված դեպքերում:

<u>Վերլուծություն</u>
ARTICLE 19-ին մտահոգում է փոփոխությունների և լրացումների մասին օրենքի նախագծով նախատեսվող վիրավորանքից պաշտպանվելու հնարավորության պահը: *Առաջինը*, վիրավորանքի սահմանումն ենթադրում է, որ անձի համբավին վնաս պատճառելու նպատակով կատարված ցանկացած բացասական կարծիք կամ գնահատող դատողություն արգելված է օրենքով: Հոդված 1087.1-ի կետ 2-ի շարադրումն ենթադրում է, որ միշտ առկա է վնաս պատճառելու մտադրությունը: Այս կանխավարկածը կարելի է հերքել ապացուցելով, որ կարծիքն արտահայտվել է գերակշռող հանրային շահերից ելնելով:

Կարծիքի կամ գնահատող դատողության նման կարգավորումը դեմ է Եվրոպական դատարանի դիրքորոշմանը, որը պաշտպանում է բացասական կարծիքի արտահայտումն այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված

կամ ընդունված փաստերի վրա և արված է արդար մտադրություններով:[28] Ավելին, թեպետ վիրավորանքի սահմանումն ենթադրում է, որ վնաս պատճառելու մտադրությունն առնվազն ենթակա է ապացուցման, Եվրոպական դատարանը շեշտել է, որ գնահատող դատողություն արտահայտելու համար ապացույցներ չեն պահանջվում:[29]

Վերը նշվածից ելնելով առաջարկվում է ներդաշնակեցնել վիրավորանքի սահմանումը գնահատող դատողության վերաբերյալ Եվրոպական դատարանի չափանիշների հետ:

Միևնույն շամանակ, չմոռանալով գնահատող դատողությունների և կարծիքների վերաբերյալ սահմանափակումներ թույլ տալու հետ կապված Եվրոպական դատարանի դժկամության մասին, ARTICLE 19-ը համարում է, որ վիրավորանքի համար օրենքով պատասխանատվություն չսահմանելն ողջամիտ է և գործնական: Եվրոպական դատարանը բազմիցս նշեկ է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որ կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցուչ համարվել ոմանց կողմից:[30] Ավելին, աշխարհի տարբեր մասերում առկա են ճշմարտությունը կամ բացասական կարծիքը պատժելու համար վիրավորանքի մասին օրենքների կիրառման անհանգստացնող օրինակներ:

Առաջարկություններ

- Վիրավորանքի սահմանումը պետք է ներդաշնակեցվի գնահատող դատողություններին վերաբերող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշների հետ, կամ, որպես նվազագույն միջոց, պետք է ամբողջությամբ վերացվի վիրավորանքի համար նախատեսվող պատասխանատվությունը:

Formatted: Bullets and Numbering

III.3. Իրավական պաշտպանության թույլ համակարգ

Ակնարկ

[28] *Lingens v Austria*, վճիռ 8 հուլիսի 1986, դիմում No. 9815/82, կետ 46, և De Haes & Gijsels v Belgium վճիռը, 24 փետրվարի 1997, դիմում No. 7/1996/626/809, կետ 47:
[29] Նույն տեղում, *Lingens v Austira*, կետ 46:
[30] Օրինակ, *Handyside v. United Kingdom*, 7 դեկտեմբերի 1976, դիմում No. 5493/72. Նմանօրինակ արտահայտությունները բազմաթիվ են տարբեր պետությունների դատարանների և դատական այլ մարմինների պրակտիկայում: Մեկ այլ օրինակ է *Oberschlick v Austria (no.2)*, գործը, որով դիմողը ներպետական դատարանների կողմից մեղավոր էր ճանաչվել քաղաքական գործչին «ապուշ» կոչելու համար: ՄԻԵԴ-ը գտավ, որ այս վճիռը խախտել է ազատորեն արտահայտվելու իրավունքը, քանի որ անձը կարծիք էր արտահայտում:

Օրինագիծը բացահայտ կերպով ճանաչում է զրպարտության մասին բողոքների դեմ կիրառվող իրավական պաշտպանության երկու ձև: Համաձայն հոդված 1087.1-ի կետ 5-ի ա) ենթակետին, փաստացի տվյալները չեն մեկնաբանվում որպես զրպարտություն եթե դրանք տեղ են գտել դատական քննության ընթացքում կամ դատական քննության մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտություններում: Հոդված 1087.1-ի կետ 5-ի բ) ենթակետը նշում է, որ զրպարտություն չկա, եթե այն արտահայտելը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային շահով և եթե հեղինակն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխիղճ է ներկայացրել այդ տվյալները:

<u>Վերլուծություն</u>
Զրպարտության մասին բողոքների դեմ փոփոխություններով առաջարկվող իրավական պաշտպանության համակարգը թույլ է:

Առաջինը, հոդված 1087.1-ի կետ 5-ի ա) ենթակետը անկաշկանդ կերպով և առանց իրավական հետևանքների արտահայտվելու բացարձակ արտոնության խիստ սահմանափակ շրջանակ է սահմանում: Այս արտահայտումներն առնվազն պետք է ընդգրկեն օրենսդրի մարմինների կողմից քննության ընթացքում արված արտահայտությունները, տեղական ինքնակառավարման մարմիններում քննության ընթացքում այդ իշխանությունների ցանկացած անդամի կողմից կատարված ցանկացած արտահայտություն, դատական քննության ցանկացած փուլում քննությանը մասնակցող ցանկացած անձի (այդ թվում՝ դատավորի, կողմերից մեկի, վկաների, փաստաբանների և ատենակալների) կողմից արված արտահայտություններ (այդ թվում՝ միջանկյալ կամ նախնական վարույթի ընթացքում) այնքանով, որքանով արտահայտությունն առնչվում է քննությանը, մարդու իրավունքների ոտնահարումները քննելու կամ ուսումնասիրելու լիազորություն ունեցող ցանկացած մարմնի առջև արված հայտարարություն, օրենսդիր մարմնի կողմից հրապարակման ենթակա ճանաչված փաստաթուղթ, վերը նշված քննություններին վերաբերող նյութերի մասին արդար և ճշգրիտ հաշվետվություն, ըստ վերը նշված (i) - (v) կետերի, և նյութի արդար և ճշգրիտ հաղորդում այն դեպքերում, երբ նյութի պաշտոնական կարգավիճակը հիմնավորում է դրա հրապարակումն ինչպես, օրինակ, պետական մարմնի, օտարերկյա դատարանի կամ օրենսդիր մարմնի կամ միջազգային կազմակերպության հարցման դիմաց տրամադրված փաշտոնական փաստաթղթերի դեպքում:[31] Ավելին, որոշ տեսակի արտահայտություններ պետք է պաշտպանվեն իրավական պատասխանատվությունից, եթե հնարավոր է ապացուցել, որ դրանք չեն արվել դիտավորյալ, չարությունից դրդված կամ վնաս պատճառելու մտադրությամբ: Այս շարքին պետք է դասվեն իրավական, բարոյական կամ հասարակության առջև պարտավորությունների կատարման ընթացքում արված արտահայտությունները:[32]

---

[31] Սկզբունք 11, «Զրպարտության սահմանումը»: Տե՛ս նաև, օրինակ *A v. the United Kingdom*, 19 դեկտեմբերի 2002 թ.-ի վճիռը, դիմում no. 35373/97:
[32] Սկզբունք 11, «Զրպարտության սահմանումը»:

Հետևաբար, ARTICLE 19-ն առաջարկում է ընդլայնել պատասխանատվություն չնախատեսող դեպքերի շրջանակը վերը նշվածն ընդգկելու նպատակով:

Երկրորդ, թեպետ ողջունելի է հոդված 1087.1-ի կետ 5-ի բ) ենթակետում ողջամիտ միջոցներ ձեռնարկելու հետ կապված պաշտպանության ճանաչումը, առաջարկվող դրույթը շարունակում է վիճահարույց մնալ երկու պատճառների բերումով: Ըստ առաջարկվող փոփոխությունների, արտահայտությունները պետք է ներկայացվեն «հավասարակշռված» կերպով: Այս պահանջը նշանակում է արտահայտվելու ազատության խաթարում, որն ավելորդ է ժողովրդավարական հասարակության համար: Երբ անձը պարտավոր է արտահայտվել հավասարակշռված կերպով, ապա ըստ էության նրան թուլ չի տրվում հայտնել իր սեփական կարծիքը:

Ենթադրվում է, որ հավասարակշռված կերպով արտահայտվելու պահանջը նախատեսված էր պատասխանատու լրագրություն ապահովելու համար: Այս կարգավորումը, սակայն, չափից դուրս սահմանափակող բնույթ ունի: Եվրոպական դատարանի չափանիշները պահանջում են միայն, որ լրագրողները գործեն բարեխիղճ և տրամադրեն արժանահավատ և հստակ տեղեկատվություն:[33]

Հետևաբար, առաջարկում ենք փոփոխությունների նախագծից վերացնել հավասարակշռված կերպով արտահայտություններ անելու պահանջը:

Երրորդ, ի հավելումն բացարձան արտոնության պաշտպանության երկու ձևերի (ըստ հոդված 1087.1-ի կետ 5-ի ա) ենթակետի և ողջամտության սահմաններում միջոցներ ձեռնարկելու մասին հոդված 1087.1-ի կետ 5 բ) ենթակետի), միջազգային և համեմատական դատական պրակտիկան ընդունում է նաև պաշտպանության այլ ձևեր: Դրանք են ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը և այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

Թեպետ *ճշմարտությունը և կարծիքը պաշտպանելու իրավունքը* կարծես թե հետևում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 1087.1-ի կետ 3-ում փոփոխություններ և լրացումներ առաջարկող օրենքի նախագծով տրվող զրպարտության սահմանումից, առաջարկվում է բացահայտ կերպով նշել պաշտպանության այս ձևերը, քանի որ փաստի և կարծիքի ճշմարիտ արտահայտությունը (գնահատող դատողությունը) միջազգային իրավունքի ներքո զրպարտություն չի համարվում:

Միևնույն ժամանակ զրպարտության սահմանումից չի հետևում *այլ անձանց խոսքը փոխանցելու* իրավունքը: Նշենք, որ Եվրոպական դատարանը նախկինում ճանաչել է պաշտպանության այս ձևը՝ պաշտպանելու լրագրողներին իրավական հետևանքներից այլ անձանց զրպարտող հայտարարությունները հրապարակելու կամ հեռարձակելու համար: *Jersild v.*

---

[33] Տե՛ս *Pedersen and Baadsgaard v Denmark* վճիռը, 17 դեկտեմբերի 2004 թ.-ի , դիմում No. 4901 7/99:

Denmark գործում Եվրոպական դատարանը գտավ, որ հարցազրույցները «անկախ դրանց խմբագրված լինելու կամ չլինելու համգամանքից, այն կարևոր միջոցներից մեկն են, որոնցով մամուլը կատարում է հանրության շաները պաշտպանողի իր կենսական դերը»:[34] Եվրոպական դատարանը հետևաբար վճռեց, որ լրագրողները պետք է պաշտպանված լինեն հանրային շահ հանդիսացող հարցերի շուրջ լրատվություն տարածելու համար պատիժ կրելուց:

ARTICLE 19-ը հետևաբար առաջարկում է, որ առաջարկվող փոփոխություններում զետեղվի այլ անձանց բառերը փոխանցելու իրավունքը պաշտպանող ճանաչող դրույթ:

Առաջարկություններ

- ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված հոդված 1087.1 կետ 5-ի ա ենթակետում արտահայտությունների համար նախատեսված պաշտպանությունը պետք է ընդլայնվի:
- Առաջարկվող փոփոխություններից պետք է վերացվի արտահայտությունները հավասարակշռված ձևով ներկայացնելու պահանջը:
- Առաջարկվող փոփոխությունները պետք է բացահայտ կերպով ճանաչեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիք պաշտպանելու իրավունքը և այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը:

Formatted: Bullets and Numbering

III.4. Վնասի հատուցման վիճահարույց կարգը

<u>Վնասի հատուցման նպատակը</u>

Հոդված 1087.1-ի կետեր 6-8-ը վերաբերում են վիրավորանքի և զրպարտության դիմաց վիասի հատուցմանը: Առաջարկվող փոփոխությունները, սակայն, բացահայտ կերպով չեն սահմանում վնասի հատուցման նպատակը: Արդյունքում առաջանում է վտանգ, որ վնասի հատուցումը կարող է օգտագործվել ազատորեն արտահայտվելու իրավունքին ի վնաս:

Նշենք, որ Եվրոպական դատարանը սահմանել է, որ արատավորող արտահայտության համար հատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձին հասցրած անմիջական վնասը հատուցելով:[35] Ցանկացած այլ նպատակով վնասի հատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու վրա, ինչը չի կարող հիմնավորված անհրաժեշտություն դիտվել ժողովրդավարական հասարակությունում:

---

[34] Տե՛ս *Jersild v. Denmark* վճիռը, 23 սեպտեմբերի 1994, դիմում No. 15890/89, կետ 35:
[35] *Tolstoy Miloslavsky v. United Kingdo* վճիռը, 13 հուլիսի 1995, կետ 51:

Արտահայտվելու ազատությունը պաշտպանելու և վերը նշված սկզբունքի համապատասխան վնասի հատուցման օգտագործումն երաշխավորելու նպատակով ARTICLE 19-ն առաջարկում է, որ փոփոխությունները բացահայտ կերպով սահմանեն վնասի հատուցման նպատակը:

Վնասի հատուցման անհրաժեշտությունը

ARTICLE 19-ին խիստ մտահոգում է առաջարկվող փոփոխություններով նախատեսվող վնասի հատուցման կարգը: Մասնավորապես, հոդված 1087.1-ի 6-8 կետերի առաջարկվող խմբագրությունը հայեցողականության լայն շրջանակ է տրամադրում դատավորներին, առանց այս հարցում բավարար ուղղորդում ապահովելու:

Առաջինը, առաջարկվող փփոխություններում չի զետեղված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն սկզբունքը, ըստ որի «վնաս հատուցելու ցանկացած կարգադրություն, անկախ դրա տեսակից և չափից, միջամտում է Հոդված 10-ում ամրագրված արտահայտվողի իրավունքին, և հոդված 10 (2) ներքո սահմանվող պատասխանատվությունը պետք է հիմնավորվի այդ հոդվածի սկզբունքներով»:[36] *Երկրորդ*, հատուցում տրամադրելու կանոնները բավարար չեն, և առկա է վտանգը, որ վնասը հատուցելու կարգադրությունը կարող է խախտել ազատորեն արտահայտվելու իրավունքը: *Երրորդ,* հստակ կանոնների բացակայությունը մեծ հավանականությամբ կբարդացնի օրենքի միատեսակ կիրառումը և բոլոր պատասխանողների նկատմամբ միատեսակ վերաբերմունքի դրսևորումը երկրում: *Չորրորդ,* առկա է վտանգը, որ հատուցման գերագույն չափը կնշանակվի կամայականորեն և խտրականորեն՝ լրագրողներին և լրատվամիջոցներին պատժելու համար:

Նշենք, որ Եվրոպական դատարանը նախկինում սահմանել է, որ զրպարտության մասին օրենքները պետք է փաստացիորեն հասցրած վնասի դիմաց անհամաչափորեն մեծ հատուցում նշանակելու դեմ համապատասխան և գործուն երաշխիքներ սահմանեն:[37] «*Զրպարտության սահմանումը»* ուղեցույցի 14-րդ և 15-րդ սկզբունքները նույնպես վնասի հատուցման կանոններ սահմանելու սպառիչ ուղղորդում են տրամադրում: Դատարաններին առաջարկվում է զրպարտող արտահայտությունների բերումով հասցրած վնասի դիմաց որպես առաջնահերթություն նշանակել ոչ-նյութական հատուցման ձևեր:[38] Նյութական հատուցումը պետք է նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ-նյութական հատուցումը բավարար չէ զրպարտող արտահայտություններով հասցրած վնասը հատուցելու համար:[39] Ավելին, նյութական հատուցում նշանակելիս հարկ է հաշվի առնել հետևյալ կանոնները.

> (b) Նյութական հատուցման չափը սահմանելիս հարկ է, ի թիվս այլ նկատառումների, հաշվի առնել արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը: Նյութական հատուցումը երբեք չպետք է ոչ իրավաչափ լինի հասցրած

---

[36] *Bladet Tromso and Stensaas v. Norway* վճիռը, 20 մայիսի 1999, դիմում no. 21980/93:
[37] *Tolstoy Miloslavsky v. United Kingdom* վճիռը, 13 հուլիսի 1995, կետ 51:
[38] Սկզբունք 14, «Զրպարտության սահմանումը»:
[39] Սկզբունք 15 կետ 1, «Զրպարտության սահմանումը»:

վնասի նկատմամբ, և պետք է հաշվի առնի ցանկացած ոչ-նյութական հատուցում և այլ քաղաքացիական իրավախախտումների համար նշանակված հատուցման չափը:

(c) Զրպարտող արտահայտությունների բերումով պատճառած փաստացի դրամական կորստի կամ նյութական վնասի հատուցումը պետք է նշանակվի միայն երբ առկա է նման կորստի հստակ հաստատում:

(d) Համբավին հասցրած ոչ-նյութական վնասի, այն է՝ դրամական գումարի չափով չարտահայտվող վնասի դիմաց հատուցման չափը պետք է սահմանվի որոշակի վերին շեմի ներքո: Այս վերին շեմը կիրառելի է միայն առավել լուրջ դեպքերում:

(e) Նյութական հատուցումը, որը գերազանցում է համբավին հասցրած վնասի չափը, պետք է նշանակվի որպես խիստ բացառիկ միջոց, միայն այն դեպքերում, երբ հայցվորն ապացուցել է, որ պատասխանողը գործել է արտահայտության կեղծ լինելու մասին տեղեկացված և հայցվորին վնաս հասցնելու հստակ նպատակով:[40]

Առաջարկում ենք, որ այս չափանիշներն արտացոլվեն առաջարկվող փոփոխություններում և որ մշակվի վնասի հատուցման մանրամասն ուղեցույց: Նման ուղեցույցը կապահովի օրենքի միատեսակ կիրառում և կծառայի որպես արտահայտվելու ազատության երաշխիք:

Ի հավելումն այս կանոնների առաջարկվում է նաև հաշվի առնել, որ Եվրոպական դատարանը նշել է, որ պատասխանողի սահմանափակ միջոցները կարող են գործոն հանդիսանալ վնասի հատուցման չափը նշանակելիս: *Steel and Morris v United Kingdom* գործում Եվրոպական դատարանը գտավ, որ պատասխանողի կողմից վճարման ենթակա 36 և 40 հազար ֆունտ ստեռլինք գումարը չափից դուրս մեծ էր «իրենց համեստ եկամուտի և միջոցների համեմատությամբ»:[41]

<u>Նյութական հատուցում</u>
Թեպետ առաջարկվող փոփոխություններով հատուցման վերին շեմեր սահմանելը գովելի է, հոդված 1087.1-ի կետ 7 գ ենթակետով սահմանվող վիրավորանքի և զրպարտության տարբեր տեսակների համար միանվագ փոխհատուցման վճարման չափը խիստ մեծ է: Ծայրահեղ դեպքերում բարոյական վնասի հատուցումը կարող է կազմել մինչև նվազագույն աշխատավարձի 2000-պատիկը:[42]

ARTICLE 19-ը համարում է, որ նյութական հատուցման առաջարկվող բարձր շեմերը անխուսափելի սահմանափակող ազդեցություն կունենան արտահայտվելու ազատության վրա անգամ միայն թղթի վրա մնալու դեպքում: Բացի այդ, երկրում բավականին ցածր եկամուտների պարագայում նման մեծ հատուցում նշանակելը տեղին չէ:

ARTICLE 19-ը հետևաբար առաջարկում է շեշտակիորեն իջեցնել նյութական հատուցման չափի վերին շեմը:

---

[40] Սկզբունք 15, «Զրպարտության սահմանումը»:
[41] *Steel and Morris. v United Kingdom* վճիռը, 15 դեկտեմբերի 2005, դիմում no. 68416/01:
[42] Նվազագույն աշխատավարձի չափը կարգավորվում է Նվազագույն ամսական աշխատավարձի մասին ՀՀ օրենքով, որը սահմանում է այս աշխատավարաձի չափը և երաշխավորում, որ այն կարող է օրենքով վերանայվել:

Լրատվամիջոցների միջոցով վիրավորանք և զրպարտություն տարածելը
Առաջարկվող հոդված 1087.1-ի կետ 6-ի դ) ենթակետը և հոդված 1087.1-ի կետ 7-ի գ) ենթակետը (համապատասխանաբար) սահմանում են համեմատաբար բարձր նյութական հատուցում, եթե վիրավորանքն ու զրպարտությունը «տարածվել են լրատվամիջոցների միջոցով» կամ արվել/հրապարակվել են լրատվամիջոցում:

Լրատվամիջոցների միջոցով տարածված կամ լրատվամիջոցում զետեղված վիրավորանքի և զրպարտության համար ավելի մեծ պատասխանատվություն սահմանելով առաջարկվող փոփոխություններն ենթադրում են, որ լրատվամիջոցների ներգրավումը մեծացնում է անձի պատվին, հեղինակությանը կամ գործարար համբավին հասցվող վնասը: Թեպետ առաջին հայացքից նման ենթադրությունը տեղին է, նմանօրինակ ընկալումը գործնականում սխալ է: Օրինակ, փոքր տպաքանակ ունեցող թերթում հրապարակված զրպարտող արտահայտությունը կարող է ավելի փոքր վնաս հասցնել, քան մեծ տպաքանակով նախընտրական թերթոնում հրապարակվածը, իսկ նախընտրական թերթոնն ակնհայտորեն լրատվամիջոց չի հանդիսանում:

Ավելին, կարգավորումը բացասաբար է անդրադառնում լրագրողների վրա, քանի որ մասնագիտության բերումով իրենց կարծիքները տարածվում են լրատվամիջոցների միջոցով: Լրագրողների նկատմամբ ավելի խիստ պատժամիջոցներ սահմանելը խտրականություն է, և զսպող ազդեցություն կունենա թե՛ իրենց և թե՛ լրատվամիջոցների վրա: Բացի այդ, կարգավորումը դեմ է Եվրոպական դատարանի այն դիրքորոշմանը, ըստ որի լրագրողները պետք է պաշտպանվեն իրավական պատասխանատվությունից հանրությանը հետաքրքրող հարցերի շուրջ արտահայտություններ տարածելու համար:[43]

Հետևաբար, ARTICLE 19 առաջարկում է ֆորմալ տարբերակում չսահմանել լրատվամիջոցներով արտահայտություններ տարածելու կամ չտարածելու միջև: Եթե անգամ լրատվամիջոցները կարող են դյուրինացնել զրպարտող այրտահայտության լայն տարածումը, հատուցման միջոցի նշանակումը պետք է միշտ կախված լինի տվյալ գործի հանգամանքներից և չպետք է գերազանցի փաստացի վնասի չափը:

[43] *Jersild v. Denmark* վճիռը, 23 դեկտեմբերի 1994, դիմում No. 15890/89, կետ 35:

Առաջարկություններ

- Առաջարկվող փոփոխությունները պետք է հստակ սահմանեն հատուցման նպատակը նշելով, որ այն նախատեսված է հատուցելու արատավորված անձի համբավին հասցրած անմիջական վնասը:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է հստակ սահմանեն, որ վնասի հատուցման բոլոր ձևերը բավարարում են Եվրոպական կոնվենցիայի հոդված 10-ով սահմանված երեք կետից բաղկացած քննության պահանջներին:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է հետևեն հետևյալ կանոնին՝ հատուցման կարգն ամրապնդելու և արտահայտվելու ազատության իրավունքի երաշխիքներն ապահովելու նպատակով.
  - Դատարանները պարտավոր են հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել և օգտագործվել են արտադատական հատուցման ձևերը, այդ թվում կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները:
  - Արատավորող արտահայտություններով համբավին հասցրած վնասը հատուցելու դիմաց միջոցներ նշանակելիս դատարանները պետք է առաջնահերթություն տան իրենց հասու ոչ-նյութական հատուցման ձևերին:
  - Նյութական հատուցում նշանակելիս դատարանները պետք է ըստ պատշաճի հաշվի առնեն արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանափակող ազդեցությունը:

- Դատարանները պետք է պարտադիր կերպով առաջարկեն կողմերին հաշտության գալ և աջակցեն կողմերին հաշտություն կնքելու գործում: Հաշտեցման առաջարկը վնասը գնահատելիս պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք:

- Նյութական հատուցման վերին շեմը պետք է զգալիորեն իջեցվի:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է բացահայտ կերպով նշեն, որ վնասի հատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն:

- Առաջարկվող փոփոխությունները պետք է պարունակեն հստակ դրույթ, ըստ որի նյութական հատուցումը պետք է համաչափ լինի հասցրած վնասին և որ հատուցման առավելագույն չափը կարող է նշանակվել միայն առավել լուրջ դեպքերում:

- Բոլոր արատավորող արտահայտությունների նկատմամբ պետք է կիրառվի հատուցման նույն վերին շեմը: Մամուլի ներգրավվածությունը չպետք է դիտվի որպես հիմք՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար:

Formatted: Bullets and Numbering

III.5. Թույլ վարույթային երաշխիքներ

Հոդված 1087.1-ի կետ 9-ում զրպարտության և վիրավորանքի հայց ներկայացնելու համար կարճ ժամնետ սահմանելու բացառությամբ առաջարկվող փոփոխություններում բացակայում են ազատորեն արտահայտվելու վարույթային երաշխիքները:[44] Հետևաբար, առաջարկվող փոփոխությունների ներքո բավական հեշտ է զրպարտության և վիրավորանքի հայց ներկայացնելը: Ստորև ներկայացվում է որոշ վարույթային կանոնների վերլուծությունը և տրվում են առաջարկություններ լրացուցիչ կանոններ սահմանելու վերաբերյալ՝ ազատորեն արտահայտվելու իրավունքի պաշտպանությունն ամրապնդելու նկատառումներից ելնելով:

<u>Ապացուցման պարտականությունը</u>
Համաձայն հոդված 1087.1-ի կետ 4-ի, փաստերի ապացուցման պարտականությունը դրված է պատասխանողի վրա: Այն փոխանցվում է հայցվորին եթե «ապացուցման պարտականությունը հայցվորից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցների»:

Այս դրույթը վիճահարույց է երկու պատճառներով: *Առաջինը,* այն կողմերի միջև նոր վեճերի տեղիք է տալիս, ինչի արդյունքում քննությունը կարող է ձգձգվել: Իրարամերժ շահերի բերումով պատասխանողն ու հայցվորը կպայքարեն ապացուցման պարտականության հարցի շուրջ. պատասխանողը կցանկանա փոխանցել ապացուցման պարտակոնությունը, իսկ հայցվորը կպայքայի, որ այդ պարտականությունը մնա պատասխանողի վրա: Այս վեճերը կբարդեցնեն դատական քննությունը և կարող են բերել դրա ձգձգմանը: Քննությունն էլ ավելի կձգձգվի եթե ապացուցման պարտականության մասին դատարանի որոշումը բողոքարկվի վերաքննիչ դատարանում:

Երկրորդ, առաջարկվող դրույթը չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Մասնավորապես, «*Զրպարտության սահմանումը»* ուղեցույցի սկզբունքներն առաջարկում են, որ հանրությանը հուզող հարցերի շուրջ արտահայտությունների հետ կապված գործերում ենթադրյալ զրպարտություն հանդիսացող արտահայտությունների կամ հանցագրումների կեղծ լինելն ապացուցելու պարտականությունը դրվի հայցվորի վրա:[45]

Սա վերահաստատում է սահմանադրական դատարանների կողմից մշակված ընդհանուր սզբունքը, ըստ որի ապացուցման պարտականությունը պատասխանողին փոխանցելը սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա: Օրինակ, *New York Times v Sullivan*, գործում ԱՄՆ Գերագույն դատարանը գտավ, որ

---

[44] Զանգվածային լրատվամիջոցների մասին ՀՀ օրենքի 5րդ հոդվածն աղբյուրները պաշտպանելու լավ կանոն է սահմանել:
[45] Սկզբունք 7, «Զրպարտության սահմանումը»:

> Ճշմարտությունը պաշտպանելու հետ կապված ապացուցելու պարտականությունը պատասխանողի վրա դնելը բոլորովին չի նշանակում, որ սրանով կկանխենք կեղծ խոսքը: Անգամ այն դատարանները, որ նման պաշտպանությունը բավարար երաշխիք են համարում, ընդունել են ենթադրյալ զրպարտության իսկությունն իր բոլոր փաստացի մանրամասներով օրենքով հաստատելու բարդությունները... Նման կանոնի առկայությամբ պաշտոնյաների վարքագծի հնարավոր քննադատները հաճախ զերծ կմնան իրենց քննադատությունը հնչեցնելուց այդ քննադատության տեղին համարվելուն կամ իրականում տեղին լինելուն չնայած, և դատարանում այն ապացուցելու իրենց կարողության մասին կասկածներից կամ դրա հետ կապված ծախսերի մտահոգությունից ելնելով: Հակված կլինեն անել միայն այնպիսի հայտարարություններ, որոնք հնարավորին չափ հեռու են անօրինականության տիրույթից:[46]

ARTICLE 19-ը առաջարկում է վերանայել հոդված 1087.1-ի 4րդ կետը վերոհիշյալ սկզբունքներին համապատասխան:

<u>Զրպարտության և վիրավորանքի հայց ներկայացնելու ժամկետի սահմանափակումը</u>
ՀՀ ՔՕ հոդված 1087.1-ի կետ 9-ում առաջարկվող փոփոխությունները սահմանում են զրպարտության և վիրավորանքի հայց ներկայացնելու ժամկետի սահմանափակում: Սահմանված ժամկետը մեկ ամիս է վիրավորանքի կամ զրպարտության տարածման մասին անձին հայտնի դառնալու պահից, սակայն ոչ ուշ, քան հրապարակման պահից 6 ամսվա ընթացքում:

Գովելի է, որ առաջարկվող փոփոխությունները վիրավորանքի և զրպարտության հայց ներկայացնելու համար կարճ ժամկետ են սահմանում, սակայն կարգավորումը թերի է այնքանով, որքանով այն հաշվի չի առնում, որ արտահայտությունները հաճախ հրապարակվում են շարունակական եղանակով, ինչպես, օրինակ, համացանցի վեպ կայքերում:

ARTICLE 19-ն առաջարկում է, որ փոփոխությունները հստակեցնեն, որ հրապարակման օրն այն պահն է, երբ տվյալ արտահայտությունը հրապարակվում է տվյալ վայրում և տվյալ տեսքով:

<u>Մեկնաբանություն</u>
Առաջարկվող փոփոխությունները չեն պարունակում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային համապատասխան օրենքը մեկնաբանելու մասին հստակ դրույթ:

Եվրոպական դատարանի պրակտիկան սահմանում է սկզբունքներ և չափանիշներ, որոնք պետք է ուղղորդեն տվյալ երկրի դատավորներին զրպարտության գործերը քննելու գործում: Ներպետական պրակտիկայի անհամապատասխանությունը Եվրոպական կոնվենցիային բերում է Եվրոպական դատարանի կողմից մարդու իրավունքների ոտնահարման համար պատասխանատու պետությունների դեմ որոշումների ընդունմանը:

Քանի որ ոտնահարումներից տուժողների օգտին նշանակված հատուցումը մեծացնում են պետության ֆինանսական բեռը, առաջարկում ենք ՀՀ

---

[46] *New York Times Co. v. Sullivan*, 376 US 254 (1964), էջ 279:

Քաղաքացիական օրենսգրքում ամրագրել հստակ դրույթ, որը երաշխավորում է, որ անձի պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանությունն իրականացվում է եվրոպական կոնվենցիայի սկզբունքները զարգացնող Եվրոպական դատարանի պրակտիկային համապատասխան:

Զրպարտության համար պատասխանատվության սահմանափակումը
Առաջարկվող փոփոխությունները զրպարտության համար պատասխանատվության որևէ սահմանափակում չեն նախատեսում:

Առաջարկվող փոփոխություններով զրպարտության համար պատասխանատվության սահմանափակում չնախատեսելն անհանգստացնող է, քանի որ մեծ թվով անձինք հայտնվում են զրպարտող արտահայտություններ «անմեղ տարածելու» համար պատասխանատվության ենթարկվելու վտանգի տակ: Օրինակ, ինտերնետի ծառայություններ մատուցողները կարող են պատասխանատվության ենթարկվել զրպարտող արտահայտություններ տարածելու համար՝ այդ տարածման հետ անմիջական կապ չունենալու հանգամանքին հակառակ: Այս առումով հարկ է վկայակոչել Խոսքի և արտահայտվելու ազատության մասին Վրաստանի օրենքի 16րդ հոդվածը, ըստ որի «անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության, եթե այն չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ տարածում է զրպարտություն»:

ARTICLE 19-ն առաջարկում է փոփոխություններով նախատեսվող պատասխանատվության շրջանակից դուրս բերել այն անձանց, որոնք չեն հանդիսանում արտահայտությունների հեղինակներ, խմբագիրներ կամ հրատարակողներ և որոնք տեղյակ չեն և չեն կարող տեղյակ լինել, որ նպաստում են արատավորող արտահայտություններ տարածելուն:

Պարզեցված կարգով անհիմն բողոքներ մերժելը
Առաջարկվող փոփոխությունները չեն ապահովում պաշտպանության արդյունավետ միջոցներ դատական քննությունը չարաշահող այն հայցվորների դեմ, որ չհիմնավորված հայցեր են ներկայացնում քննադատությունը լռեցնելու և ոչ թե իրենց համբավը պաշտպանելու նկատառումներից ելնելով:

Պատասխանողներին պետք է հասու լինեն իրավական միջոցներ՝ պաշտպանվելու չհիմնավորված բողոքներ ներկայացնող այն հայցվորներից, որ առանց հաջողության որևէ հեռանկարի փորձում են կանխել լրատվամիջոցների կողմից իրենք գործողությունների քննադատությունը: Ինչպես և ցանկացած այլ դատական վարույթ, չհիմնավորված գործերը կարող են սահմանափակող ազդեցություն ունենալ արտահայտվելու ազատության վրա: Հենց դրան էլ ձգտում են հայցվորները:

ARTICLE 19-ն առաջարկում է սահմանել կարգ՝ բողոքը դատական քննությունը վաղ շրջանում կարճելու/մերժելու համար, եթե հայցվորն իրեն համար նպաստավոր ելքի հավանականության օգտին որևէ հիմքեր չի ապահովում:

Առաջարկություններ

- Հոդված 1087.1, կետ 4-ի շարադրումը պետք է փոփոխվի նշելու, որ հայցվորը պարտավոր է ապացուցել զրպարտություն համարվող փաստացի տվյալների իրականությանը չհամապատասխանելը, եթե վերջինները վերաբերում է հասարակությանը հուզող հարցերին:

- Փոփոխությունների և լրացումների նախագիծը պետք է ընդգրկի դրույթ, ըստ որի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության մասին դրույթների մեկնաբանությունը պետք է իրականացվի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երաշխիքներին համապատասխան, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի:

- Փոփոխությունների և լրացումների նախագիծը պետք է նշի, որ զրպարտության մասին գործ հարուցելու ժամկետը մեկնարկում է տվյալ արտահայտությունը տվյալ վայրում և տվյալ ձևով հրապարակելու առաջին օրվանից:

- Փոփոխությունների և լրացումների նախագիծը զրպարտության համար պատասխանատվության ենթարկվող անձանց շրջանակից պետք է վերացնի այն անձանց, որոնք չեն հանդիսանում զրպարտող արտահայտությունների հեղինակներ, խմբագիրներ կամ հրատարակիչներ և տեղյակ չէն և չէն կարող իմանալ, որ նպաստում են զրպարտող արտահայտությունների տարածմանը:

- Դատարանները պետք է կարողանան վաղ շրջանում կարճել/մերժել չհիմնավորված բողոքների վարույթը, սրանով իսկ թույլ չտալով չարակամ հայցվորներին հեռանկարներ չունեցող զրպարտության բողոքներ դատարան ներկայացնելու միջոցով ճնշումներ գործադրել քննադատող լրատվամիջոցների նկատմամբ :

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Առաջին ընթերցում

Պ-774-23.11.2009,15.03.2010-ՊԻ-010/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 19-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Հոդված 19. Պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանությունը

Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից եւ զրպարտությունից՝ սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով:

Հոդված 2. Օրենսգրքի 60-րդ գլուխը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1.-րդ մասով.

,,2.1. Պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները:

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները

1. Անձն, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

2. Սույն օրենսգրքի իմաստով վիրավորանքը՝ խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է (կարծիքը կամ գնահատող դատողությունը (value judgement)):

Սույն հոդվածի իմաստով արտահայտությունը չի համարվում անձին արատավորելու մտադրությամբ կատարված, եթե այն տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային շահով:

3. Սույն օրենսգրքի իմաստով զրպարտությունը՝ անձի վերաբերյալ նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող եւ իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների (statement of fact) հրապարակային արտահայտությունն է:

4. Զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը, կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններկամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցները:

5. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված փաստացի տվյալները չեն մեկնաբանվում որպես զրպարտություն.

ա) եթե դրանք տեղ են գտել դատական քննության ընթացքում դատական քննության մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում,

բ) եթե այն արտահայտելը տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային շահով, եւ եթե անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխիղճ է ներկայացրել այդ տվյալները:

6. Վիրավորանքի դեպքում անձն որպես բարոյական վնասի հատուցում իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած անձից դատական կարգով պահանջել ստորեւ թվարկված միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

ա) հրապարակային ներողություն: Ներողություն հայտնելու ձեւը սահմանում է դատարանը,

բ) հերքում, եթե դա հնարավոր է՝ հաշվի առնելով վիրավորանքում տեղ գտած արտահայտության էությունը: Հերքման ձեւը սահմանում է դատարանը,

գ) վիրավորանք տարածած ԶԼՄ-ում դատարանի վճռի հրապարակում: Հրապարակման եղանակը եւ ծավալը սահմանում է դատարանը,

դ) միանվագ փոխհատուցման վճարում

- նվազագույն աշխատավարձի մինչեւ 250-ապատիկի չափով,

- վիրավորանքը անձի դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետեւանքով զանգվածային լրատվության միջոցներով տարածվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ 500-ապատիկի չափով

- զանգվածային լրատվության միջոցով վիրավորանքի դեպքում զանգվածային լրատվություն իրականացնողի կողմից՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ 1000-ապատիկի չափով:

Գումարի չափը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի առանձնահատկությունները:

7. Զրպարտության դեպքում անձն իրավունք ունի որպես բարոյական վնասի հատուցում իրեն զրպարտած անձից դատական կարգով պահանջել ստորեւ թվարկված միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

ա) զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների հրապարակային հերքում: Հերքման ձեւը սահմանում է դատարանը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,

բ) զրպարտությունը տարածած ԶԼՄ-ում դատարանի վճռի հրապարակում: Հրապարակման եղանակը եւ ծավալը սահմանում է դատարանը,

գ) միանվագ փոխհատուցման վճարում՝

- նվազագույն աշխատավարձի մինչեւ 500-ապատիկի չափով,

- զրպարտությունը անձի դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետեւանքով զանգվածային լրատվության միջոցներով տարածվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի

մինչեւ 1000-ապատիկի չափով

- զանգվածային լրատվության միջոցով զրպարտության դեպքում զանգվածային լրատվություն իրականացնողի կողմից՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ 2000-ապատիկի չափով:

Գումարի չափը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի առանձնահատկությունները:

8. Սույն հոդվածի 6-7-րդ մասերով սահմանված բարոյական վնասի հատուցում ստանալու հետ միասին անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջել վիրավորանքի կամ զրպարտության հետեւանքով իրեն պատճառված նյութական վնասները, այդ թվում՝ ողջամիտ դատական ծախսերը եւ խախտված իրավունքների վերականգման համար իր կողմից կատարված ողջամիտ ծախսերը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան վիրավորանքի կամ զրպարտության տարածման մասին անձին հայտնի դառնալու պահից մեկ ամսվա ընթացքում, սակայն ամեն դեպքում ոչ ուշ քան հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում:

Հոդված 3. Օրենսգրքի 22-րդ հոդվածի «19 հոդվածով» բառերը փոխարինել «1087.1-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հարպարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Առաջին ընթերցում

Պ-774[2]-23.11.2009,15.03.2010-ՊԻ-010/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասից հանել «135-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 136-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Առաջին ընթերցում

Պ-774[1]-23.11.2009,15.03.2010-ՊԻ-010/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 135-րդ եւ 136-րդ հոդվածները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: